

I. 1964—1970 թթ. ՊԵՂԱԽԻՄ ՆԵՐԸ

Կենտրոնական թաղամասի պեղումներին մասնակցել են հեղինակը (տեղամասի պետ 1964—1968 թթ. և 1970 թ.), հնագիտության և աղբագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատակիցներ ն. Հակոբյանը և Յ. Բաբայանը (1969—1970 թթ.), Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ավագ դասախոս Ռ. Եփրեմյանը (1968 թ.), Երևանի պետական համալսարանի ասպիրանտ, այժմ գասախոս Ի. Ղարիբյանը (1968 թ.), համալսարանի պատմության ֆակուլտետի փորձառուուսանոզներ (1968—1969 թթ.): Ընդհանուր աշխատանքները ղեկավարել է Դվինի արշավախմբի պետ պրոֆ. Կարո Ղաֆարարյանը:

1964 թ. պեղամեները հիմնականում հետախուղական բնույթ էին կրուա: Նպատակն էր պարզել վաղ միջնադարյան Դվինի արհեստալիին արտադրանքի համապատասխան մի շարք հարցեր, շերտագրական գիտարկումներ կատարել: Այդ հարցերը լուծվեցին մասամբ ավելի վաղ շրջանի վերաբերյալ, քանի որ պեղումներից դուրս եկած նյութերը գերազանցապես վերաբերում էին IX դարին:

Աշխատանքները հիմնականում կենտրոնացվեցին տեղամասի արևմտյան հատվածում 1954 թ. ընդհանապատճեամբ-19 գծի ե, լ, օ, ի քառակուսիների շրջանում (նկ. 2): Այդ տարածությունը փոված է կաթողիկա եկեղեցուց արևմուտք, մոտ 15 մ. հեռավորության վրա: Ե և լ քառակուսիները բոլորովին պեղված չեն, իսկ ց և ի քառակուսիներում հեռացված էր վերին շերտը: Նախորդ տարիների պեղումների ժամանակ այդ հատվածում բացվել էր հյուախից-հարավ ձգվող ինչ-որ շինության պատի մնացորդներ, որը հնարավորություն էր տալիս ենթագրել մոնումենտալ շենքի առեալության մասին:

Պեղումների հետևանքով բացվեց այդ շինություն արևելյան պատի մի մասը 20,0 մ երկարությամբ: Պատի հաստությունը 1,24 մ. է, պահպանված մասի բարձրությունը՝ տեղ-տեղ 80 սմ: Այն ձգվում էր դեպի հարավ և մտնում մ-19 քառակուսու մեջ: Պատի շարվածքի ձևը՝ եղևնաշար, ցույց է տալիս, որ շինությունը պետք է կառուցված լիներ առնվազը VIII դարում:

Այդ են ապացուցում դոտնված նյութերը՝ տաշված օղակներով պատկն թասերի բեկորները, VIII դ. արաբական պղնձե դրամները¹ և այդ շրջանին բնորոշ զարդամութիվներով խեցեղենը:

Շինության ներսում, գետնի մակերեսից 2,0 մ խորության վրա բացվեց շինության հատակը (աղ. II, 1), որը շատ լավ պահպանված էր: Հատակը մոտ 10 սմ հաստությամբ պնդացրած կավից էր, որի տակ 20—25 սմ հաստու-

¹ Կենարոնական թաղամասում 1964—1970 թթ. հայտնաբեռված ողամներու ողումներու են Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագրության բաժնի սաղու: պատմ. գիտ. թեկնածու Խ. Մուշեղյանի կողմից:

թիամբ լցված էր մանր խիճ, հավանաբար եկեղեցու զամ բուն այդ շինության տաշվածքարերի ավելցուկներից: Հսու երևոյթին IX գարում հատակը մի փոքր բարձրացրել են, որի հետևանքով նկատվում են տեղանքի որոշ անհամամասնություններ:

Շինության սենյակների մեջ մտնող եւ կ-19 քառակուսիներում բացվեցին երկու մեծ հոր (ե-19 քառակուսում բացվածի չափերն են. խորությունը՝ 1,0 մ, բերանի տրամագիծը՝ 1,35 մ, կ-19 քառակուսու բացվածինը՝ խորությունը՝ 1,75 մ, բերանի տրամագիծը՝ 1,5 մ. հատակի տրամագիծը՝ 2,0 մ), որոնք կոնաձև են եւ Դվինում լայնորեն տարածված հորերի սիստեմի նախնական ձևերն են ներկայացնում (աղ. III): Այդ հորերի VIII—IX գգ. թվագրման օդինքն են խոսում նաև Փայտակարանի (Օրբեն-Կալայի) պեղումներից, ժամանակական շերտերում երևան եկած նույնատիպ հորերի առկայությունը²:

Հորերը հարուստ էին հնագիտական առարկաներով: Հայտնաբերվել են խեցեղեն և ապակե անոթների րազմաթիվ բեկորներ, Ապակե անոթները մեծ մասամբ սիատիպ են, մի հանգամանք, որը խոսում է նրանց կիրառման նեղ հնարավորությունների մասին: Ամենայն հավանականությամբ ապակե անոթների մի մասը պատկանել են եկեղեցական սպասքին: Ապակե անոթների մեջ մեծ խումբ են կազմել դամպարները (լամպաձուկ), որոնք կախված են եղել Էաթոռիկե եկեղեցու ջահերի վրա: Մետաղե իրերից հետաքրքիր է բրոնզե փոքր ունելին, որը հավանաբար օգտագործվել է ոսկերչական աշխատանքներում: Նման աշխատանքներում է հավանաբար օգտագործվել 2305 /17 ոսկրե գդալիկը: Պահպանվել է գդալիկի մլայն բերանը պոչի փոքր մասով (նկ. 30): Բերանը բավական լայն է, օվալաձև, պոշը կլոր է (բերանի երկարությունը՝ 3,5 սմ): Գդալիկը գտնվել է շինության խոզոր հորերից մեկում: Գտնված դրամները թվագրվում են VIII դ. վերջով և IX դ. առաջին տասնամյակով:


Թաղամասի ե-19 քառակուսու արևելյան մասում, անմիշապես պատի մեջ բացվեց մի փոքրիկ հոր, որի միջից գորս եկան ձևավոր շուրջով մեկ սափոր և կլոր տափակ աման՝ ելուստաձև կանթերով:

IX գ. բարձրացված հատակը, որը մոտավորապես 1,70 մ խորության վրա է, պահպանված է միայն հորերի մոտակալքում, որոնք գտնվել են շինության տնտեսական բաժանմունքում: Ը և կ-19 քառակուսիներում, երր հեռացվեցին ստորին շերտերը, պարզվեց, որ շինության հատակն այսաեղ ավելի ցածր է, քան հարեան բաժիններում: Այս մասում, անմիշապես հաաակի վրա հայտնաբերվեցին ձևավոր բերանով երկու մեծ կժերի բեկորներ (աղ. II, 2), կարմիր ներեւով փայլեցված փոքրիկ կճուճ և այլն, որոնք հիմնականում թվագրվում են VIII—IX դարերով:

Շինության հատակից քը բարձր երևան են գալիս զնարակած թասերի և պնակների բեկորներ (աղ. IV, 2): Ընդունված աեսակեաների համաձայն, այդ տիպի զնարակումը (եռագույն՝ դարչնագույն, դեղին և կանաչ երանգավորումներով, բնորոշ գարգերով) միջնադարյան զնարակած խեցեղենի նախնական ձևն է, ոը մեկ անգամ ևս ապացուցվում է կենտրոնական թաղամասում հայտնաբերված նյութերով: Պետք է նշել, որ 1964 թ. պեղումների ընթացքում հայտնաբերված զնարակած անոթների թիվը շատ սակավ էր և հնարավորու-

² Г. А. Ахмедов, Некоторые итоги археологических раскопок городища Орен-Кала в 1959—1963 гг., в сб. «Археологические исследования в Азербайджане», Баку, 1965, стр. 136.

№4. 1. Узоры на дне кубовидной чаши из глины




թյուն շընձեռեց որևէ կոնկրետ եզրակացության հանգի նրանց թվադրման վերաբերւալ: ի-19 քառակուսում 1,45 մ. խորության վրա գտնվեց կաթնավուն ծնարակով պատժ և կորալտով արված օսրդանախշով մի պնակի բեկոր (աղ. IV, 1), որը միջադետքան ծագում ունի և հավանաբար IX դ. ներմուծվել է Սամասայից (Միջադետք): ի-19 քառակուսին պեղելու ժամանակ ստորին շերտերից գտնվեցին քարե երկու ամանների բեկորներ (պահպանվում են Դվինի հնագիտական բաղայում): Քարե ամանների դյուտը 755մը վաղ միջնադարյան շերտերում խիստ հետաքրքիր է, քանի որ դրանք Դվինում դրեթե չեն հանդիպում: Քարե անոթների պատշաստման կուլտուրան Հայաստանում լայն տարածում ուներ ավելի վաղ ժամանակաշրջանում և հայտնաբերվում են ուրարտական և հին հայկական հուշարձաններում (Երերունի, Կարմիր բլուր, Արտաշատ և այլն): Վաղ միջնադարյան մի քառականթ անոթ գտնվել է Գառնիի IV—V դդ. շերտում (2235/20), որը իր ձևով շատ է մոտենում 'Նոյնում գտնված ամաններին:

Դվինի ամանները պատրաստված են բաղալտից և ունեն բավական լավ մշակում: Դրանք խորն են, մոտ 24,0—26,0 սմ և հաստ պատնորով՝ 4,0—5,0 սմ: Ամաններն ունեն հորիզոնական կանթեր, իսկ մի բեկորի վրա պահպանվել է ծորակը (նկ. 29,9):


X—XIII դդ. շերաբրն այդ հատվածում շատ վատ են պահպանվել, քանի որ մոտ 1,0 մ խորությամբ ամրող շերտերը քանդվել և խառնվել է՝ XVII—XVIII դդ. թաղումների հետևանքով: Մեղ թվում է, որ ընդհանրապես կենարունական թաղամասը 893 թ. երկրաշարժից հետո խիստ տուժել է և այլևս չի բնակեցվել կամ շատ թույլ է բնակեցված եղել: Այդ են պահպան գտնված ուշ շրջանի խիստ սակավաթիվ նյութերը, ճարտարապետական մանրամասների բացակայությունը և շինությունների աղքատությունը:

Նույն թվականի աշնանը մասնակի պեղումներ կատարվեցին ց-19 քառակուսում: Պեղվեց մի փոքրիկ սենյակ, որտեղ դուրս եկավ մեծ քանակությամբ մոխիր, որի մեջ առկա էին վաղ երկաթի ժամանակաշրջանի կարավանների բեկորներ: Հստ երկույթին, միջին դարերում, հողային աշխատանքների ժամանակ, այդ բեկորները վեր են հանվել ստորին շերտերից: Դտնվեց կավե փոքրիկ հալոցի բեկոր:

1965 թ. պեղումները. Շինության հետ կապված մի շարք հարցեր լուծելու նպատակով այս տարի պեղումները կենտրոնացվեցին երկու կետերում՝ հյուսիսալին մասում, որը անկանու բացվում էր տնտեսական հարկաբաժինը և հարավային մասում, որաեղ բնակելի մասն էր: Կաընոր է նշել, որ պեղումները լավ արդյունքներ տվեցին: Հիմնականում պեղվեցին ց, ձ-19 և -20, ց-18 և -19, հ-19, ի-18 և -19 քառակուսիները (նկ. 4): Շինության բնակելի հարկաբաժիններից մեկը սյունաղարդ սենյակով (աղ. V) բացվեց ց և ձ քառակուսիների շրջանում: Սենյակի մեջ հավասար հեռավորությունների վրա պահպանվել էին չորս խարիսխներ՝ փայտե սյուների համար (աղ. VI): Հարավային կողմում ձգվում է մի պատ, որը կեսից ընդհատվում է և առաջմ որոշակի բան ասել հնարավոր չէ: Սյան խարիսխների գասավորությունը և նրանց հեռավորությունը միմյանցից ցույց են տալիս, որ այդ մասում շինություն ունեցել է հաղարաշեն ծածկ (դիմացում): Այս փաստը Հայաստանի միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության համար մեծ կարևորություն է ներկայացնում: Շինության հատակը շարունակվում է նաև այս քառակուսիներում: Նյութերը վերստին ցույց են տալիս, որ շինությունը VIII դ. է կառուցվել:



Նկ. 2. Հատվածագիծ 1964 թ. պեղված հասվածին



Եկ. 3. 1964 թ. պեղպատճեամս հատվածի կողմէն ամսագլուխ է արևակ:

Տեղամասի հյուսիսային կողմում շարունակվեցին նախորդ տարվա պեղումները ց-19 քառակուսում։ Թացվեց երկու հոր, որոնցից մեկն ուներ 5,0 մ խորություն և 2,0 մ տրամագիծ։ Հորը շատ հարուստ էր առարկաներով և իրեռով։ Դուրս եկան IX դ. հասարակ և չնարակած խեցեղենի հիանալի նմուշներ (ամբողջական և բեկորներով), ապակե անոթների բաղմաթիվ օրինակներ, սիրանի ասանյակի հասնող ձեերով։ Ապակե անոթների մի մասը տարրեր գույների զամապարներ են, նախորդ տարվա նյութերի նման, որոնք պատկանել են կաղողիկե եկեղեցու խոշոր ջահերին։ Ապակե զամապարների տարրեր գույների ներդաշնակությունը լուսային հետաքրքիր էֆեկտ է ստեղծել եկեղեցու ներսում։ Ապակե անոթների այս մեծ ժողովածուի գուտը լայն հնարավորություններ է ընձեռում ուսումնասիրելու միջնադարյան Հայաստանի պատկերության վաղ շրջանը։ Ապակե թասերի հիանալի օրինակներ հայտնարերվեցին ց-18 քառակուսու փոքր հորում։ Ըստ երեսութիւն, այն փոքրիկ թաքստոց էր, որի պատերի տակ շարված էր շուրջ 14 թաս, նուրբ երանգներով։ Անոթները պատրաստված էին դեղարվեստական րարձր ճաշակով։

Մեծ հորում գտնված իրերի մեջ առանձին խումբ են կազմում միջագետքյան ծաղում ունեցող կաթնավուն զնարակով պատած և կապտավուն դարդանախցերով պնակները, որոնք մեկ անգամ ևս ապացուցում են Դվինի առեւտրական լայն կապերը մերձավորարևելյան առաջավոր երկրների հետ։

Նույն հորում գտնվել են նաև մետաղե իրեր, այդ թվում՝ ոսկերչի աշխատանքալին գործիքներ, շատ նուրբ հատիչներ, կողաքեքի մասեր, զարդեր (2326/106, 107, տղ. XXXVI, 7,8) և այլն։ Հորի հնագիտական նյութը, որը մի քանի հարյուրի է հասնում (բեկորներով), թվագրվում է IX դ. արարական դրամներով։


Զնարակած հիանալի թասեր և ապակեղեն հայտնարերվեց ց-19 քառակուսում բացված փոքր հորից։

Թացված շինության հյուսիսային և արևելյան կից կառուցները և նրանց փոխհարարերության հարցերը լուծելու նպատակով, որոշ աշխատանքներ տարվեցին ց-18, 1-18 և -19 քառակուսիներում։ Այստեղ դեռ նախորդ տարիների պեղումներից բացմել էին կրաշագահում։ Հասարակ շարվածքով ասրբեր պատերի մնացորդներ։ Անհրաժեշտ էր պարզել, թե այդ պատերը որևէ կապ ունե՞ն արդյոք շինության հետ։ ց և 1-18 քառակուսիներում բացվեցին նրանց մի մասը (աղ. VII, 2), որոնք գնապի արևելք են գնապում։ սակայն ընդհատվում են։ ըստ երեսութիւն, այդ պատերը հետոգայում քանդվել են, որը և անորոշ է դարձնում ընդհանուր կապը։ 1-18 քառակուսում բացվեց հիանալի հատակ բնակելի սենյակի մեջ։ Հատակին գանվեցին փորագիր հաստ ապակե բաժակի բեկորներ, ինչպես նաև եղիպտական ծագում ունեցող ջողյուն խեղեղեն թասի շրթնամաս։

Նյութերը ցուց են աալիս, որ այս մասում ևս VIII—IX դդ. աշխարհիկ նշանակություն ունեցող շինություն է եղել։ Շինության VIII դ. թվադրելը հաստատվում է նաև պատերի եղևնաձև շարվածքով, ինչպես նաև արարական մի քանի պղնձե դրամների առկայությամբ։

Պեղվող հատվածի ց-19 քառակուսում բացվեց լայն տրամադով ջրատար խողովակների շարք (տեղում պահպանվել էին երեքը), նողովակները ձգվում էին դեպի հարավ, ց-20 քառակուսին, որտեղ ուրվագծվում էին ինչ-որ հորի մնացորդներ (աղ. VIII)։ Հորի շրջապատը մաքրելուց և բերանը բացելուց հե-

Fig. 4. Zemstvenaya karta na kuznichnykh 1964—1965 pp. 11142m 2m 11142m 2m



տո պարզվեց հետևյալ պատկերը։ Հորի բերանին, ուղղահայաց գիրքով, դրված էր ռեսի ներս իջնող կավե խողովակ, որի բերանը ծածկված էր թթած աղյուսով։ Հորը 2,7 մ խորությամբ գտարկ էր։ Բերանի շուրջը, ներսի մոտ 0,7 մ խորությամբ շարված էր հասարաշենի ձևով մանր թթած աղյուսներ։ Հորը պեղելու ժամանուկ հայտնաբերվեցին XI—XII դդ. մի բանի հարթ և ոլորուն կապույտ գույնով ապակե ապակե ապարանջաններ։ Հորի բարանին հավասար բացվեց կավե պնդացրած հատակ, որի վրաւեց դժուգա։ նյութերը նույնպես թվագրվում են XI—XII դդ., հատկապես ընորոշ է շնարակած բաղմտգույն խեցեղենը։ C-19 քառակուսու հարավարևելյան անկյունում գտնվեց մի տուփ քար, որի կենտրոնում խորը փորված էր։ Բացված խողովակներով հորը, տուփ քարը հավանաբար պատկանել են ինչ-որ արտադրական կառուցքի։ Կարենը է նշել, որ խողովակների մեջ կար մանրահատիկ եավի նստվածք, որը հավանաբար առաջանակ է բարձրացնելու համանուկ հոսող շրերից։ Ուշ շրշանի նյութերը խիստ ավերվել են հետագա թաղումների հետևանքով։

Եկրտագրական որոշ հարցեր պարզելու նպատակով ց-18 և -19 քառակուսիներում խորացանք մոտ 0,5 մ։ Մեղ համար անսպասելի³ այդ հատվածում բացվեց վաղ երկաթի ժամանակաշրջանի շերտ, նույն դարաշրջանի սկզբունքում փորձ կայլեցված խեցեղեն նյութերով։ ց-19 քառակուսում բացվեցին սկզբանակած կարասներ։ Կարասներից մեկի մեջ գտնվեց մի երկարավուն անոթ (նկ. 1.թ), որն ակներևարար գինի վկրցնելու համար է ծառայել։ Կարասներն իրենց պատրաստման և դաշտակով և ձևով կրկնում են Դվինի միջնարերդում բացված նմանօփինակ նմուշներին, այն տարբերությամբ, որ նրանց իրաննեռի վրա բացակայում են ուռուցիկ դարդանախշերը։

1966 թ. պեղումները. Պեղման աշխատանքները տարվում էին ս. ճ-21. 1, 2, 3, 4-20 և հ-18 քառակուսիներում։ Նպատակն էր պարզել շինության արձական և հյուսիսային պատերի առկայության հարցը։ Նշենք, որ առևմուտան մասում պատերի հիմնապատերի հետքերն առաջիմ բացակայում են, իսկ հյուսիսային մասում պատերը խիստ քայլքայված են և լրիկ պատկեր կազմելը անհնար է։

Տեղանակի ս. ճ-21 քառակուսիները պեղվեցին շինության մակարդակին հավասար։ Այս հատվածում ևս շարունակում էր շինության կամածեմ հատակը, շատակին, իր տեղում բացվեց մի մեծ գեղնավուն կճում, յայն բերանում և գնդում իրանով։ Կճումի բերանին գրված էր մտրմարե հարթ, յավ հողված տախտակի բեկոր։ Նույն մասում գտնվեցին օարև փոքրիկ խաչ (նկ. 30.4), փորագիր ապակե անոթների բեկորներ, որոնք թվագրվում են VII—VIII դդ.։ հ-18 քառակուսում նույն խորությունից գտնվեցին եղենազարդ վերադիր գոտիով կարասի բեկորներ, որոնք բնորոշ են վաղ ֆեոդալական ժամանակաշրջանին։

հ-19 քառակուսում բացվեց մի հոր, որն անմիջապես շինության հյուսիսային (տնտեսական) հատվածի արևելյան պատի տակ էր գտնվում։ Հորի միջից գտնված իրերը (ջնարտկած բաղմագույն և միագույն անոթներ, ապակե թասերը բեկորներ, եռաթև նետասլաքի բեկոր և այլն) թվագրվում են IX դ., բայց մի փոքր ավելի վաղ, քան շինության մեծ հորի նյութերը։

³ Թվագիր էր, թե կենտրոնական թաղամասի այդ հատվածում ի հայտ կդան V—VII դդ. շինությունների հետքեր և կպտնվեն վաղ միջնադարյան նյութեր։ Հատ երեսվածքին, կաթողիկե եկեղեցին կառուցելուց հետո այդ հատվածը հրապարակի գեր է կաապարել։

Պեղավայրի հ, ց, հ, ի-20 քառակուսիների շրջանում (աղ. IX), որը բացվեց 2,0 մ խորությամբ, ոչ մի էական հարց շպարզվեց՝ կապված շինության հետ: Սիայն կենտրոնական մասում բացվեց հում կավե աղյուսներով շարված հաստ պատի մնացորդներ, քայլքայված վիճակում: Ի-20 քառակուսում 1,80 մ խորության վրա գտնվեց մի տուֆակերտ, ճոխ հարդարված խոյակ, որը թվագրվում է V-VI դդ. (նկ. 6₂):

Խոյակի բարձրությունը մոտ 42 սմ է: Այն երեք կոզմից ունի հիանալի քանդակներ, որոնք բնորոշ են վաղ միջնադարյան քանդակագործությանը և բազմից հանդիպում են կոթողների և ճարտարապետական հուշարձանների վրա: Խոյակի վերին մասը խիստ քայլաված է: Այն հավանաբար ունեցել է ատամնաշար, որը հանդիպում է նույնատիպ այլ խոյակների վրա: Մի կողմից օղակի մեջ պատկերված է հավասարաթիւ իտալ. վերցված ոճավորված տերևների մեջ: Երկրորդ երեսին արված է հովհարածե զարդ, իսկ հաջորդում՝ սիմետրիկ քանդակված չ շաա տարածված լոտոսը, ոճավորված աերևների մեջ: Չորրորդ կողմում նկատվում են ինչ-որ դարգերի հետքեր, բայց խիստ մաշված են և չեն վերականգնվում: Խոյակի կենտրոնով, երկու կողմից անցնում են խորը ակոսներ: Նույն տիպի խոյակ հայտնաբերվել է Հրվեժի գերեղմանաաանը, որը դրված է եղել թեավոր խաչով աստիճանավոր կոթողի այան վրա: Կատողիկե եկեղեցու և կաթողոնիուսարանի մոտ նկատվում են քառակուսի և ուղղանկարուն հաաակաղծով հիմքերի հետքեր, որոնք շարված են լավ մշակված քարերով: Թեավոր խաչների մեծ մասը գտնվել են դրանց ջրջապատում: Հավանաբար Դվինում թեավոր խաչերով կոթողների թիվը շատ է եղել, քանի որ գտնվել են կոթողներին պաականող սյուների, խարիսխների և խոյակների բազմաթիվ օրինակներ:

Արտադրության միջոցների ուսումնասիրության համար կարևոր է երեխեղի կաղապարի մի մասի գյուտը, որը երկար օգտագործելուց իիխտ դեֆորմացիայի է ենթարկվել (նկ. 29₂): Կաղապարի մեջ հավանաբար ձուլել են աշխատանքային ինչ-որ գործիք: Նկատվում է բերանի մի մասը, իսկ մի կողմում արված է թմրիկ, հավանաբար կոթառի անցրե համար (2450/68, երկարությունը՝ մոտ 15,0 սմ, լայնությունը՝ 11,0 սմ):

Ինչպես նախորդ տարիներին, 1966 թ. և X—XIII դդ. շերտը իմաստ աղքա-
ակ է, յան շինության հետքեր, իսկ նույնագույն սակավ են:

1967 թ. պեղումները. Պեղումները հետաքրքիր նյութեր տվեցին շինուալյան հարտվային հատվածի վերաբերյալ, շրջնության կառուցման թվադրության ճշտման կապակցությամբ, ինչպես նաև Դվինի կենտրոնական թաղամասի նախարարիստոնեական զրցանի պատմության, մասնավորապես պաշտանմունքին վերաբերող հարցերի պարզաբնական վերաբերյալ. Պեղումները հիմնականում կենտրոնացված էին շինուալյան հարավային և արևմայան հատվածում ե-20 և -21, Ե-19 և -20, Ա-19 քառակուսիներում (աղ. X):

Դեռևս 1965 թ. բացված հարավային պատի ընջ երեան եկավ մուտքը (աղ. XI), որը կապում էր երկու սենյակները։ Ծինության արևելյան պատճը ձրգվում էր հարավ՝ ա,—ա-19 քառակուսիների ուղղությամբ։ Հսա երևույթին, այս աեղ մենք գործ ունենք աարդեր բաժանման մունքներով մեծ կոմպակտություն հետ։

**486. Ն. Մ. Տօկարսկու վերակադրությունը, Ն. Մ. Տօկարսկի, Ջքրեջ, II, 1964
Վօհճաբերդ, բաշխությունը 1958—1962 թ., Երևան, 1964, պատճեն 39—44, պատճեն 16, 23**

⁵ *Տե՛ս 4. Հաֆադայշան, Ծովի քաղաքը կ նոր ակումբներ; էջ 146—152:*

Հետաքրքիր նյութեր տվեցին օ-20 և -21 քառակուսիների պեղումները։ Այս-
տեղ արևելքից արևմուտք ձգվում էր մի նեղ առվակ, որի եզրերը շարված էին
սանր քարերով։ Առվակը ծածկված էր վառ կտրմիր, թրծված հաստ աղյուսնե-
րով։ Հավանաբար այն տրված էր տանիքից թափվող անձրևաջրերը հեռացնե-
լու համար։ օ-22 քառակուսու մեջ, ուղ ուղղված է առվակը, նկաավում են
հորերի մնացորդներ։ Պեղվող հատվածում եղել է սենյակ, նկտուվում են խիստ
քայլայված հիմնապատեր, իսկ օ-21 քառակուսու արեելյան մասում ընկած էր
մեծ չափերով մի խարիսխ, որն իր հարդարանքով հիշեցնում էր Դվինի V—VI դր.
լիվազրվող խարիսխներ։

Ծենությունը VIII դ. թվագրվելը այլևս ոչ մի կասկած չի հարուցում։ Այդ
են վկայում հատակին դտնված հնագիտական բնորոշ իրերն ու առարկաները։
օ-20 քառակուսում, անմիջապես նոր բացված մուտքի մոտ, գտնված երկաթե
նութել նետասլաք, որն իր լավ պահպանված վիճակով Դվինում միակն է։ Ինչ-
պես հայանի է, նետասլաքների այս հիմքի թվագրությունը Հալաստանում՝ և
Անդրկովկասում չի անցնում մ. թ. VIII դարից⁶, օ-19 քառակուսում 2,0 մ խո-
րութիւնից գուրս են զալիս ոելիեփ հղւածն զարդագոաիով խոշոր կարասի բե-
կորներ, որոնք թվագրվում են VI—VIII դր.⁷, օ-20 քառակուսում, անսրջապես
եռաթե նետասլաքի մոտ, հայտնաբերվեց բարձր հենակով, տանձածել իրանով
մի անոթ, որն ունի հարուսա զարդանախչեր, բնորոշ վաղ միջնադարյան խե-
ցեղնին։

IX դ. նյութերը գերազանցապես դուրս են գալիս հորերից։ Հորեցից մեկը
օ-20 քառակուսում, նորից հատած կոնի տեսք ուներ և րավականին մեծ շա-
փեր։ Հորից գտնվեցին երկու ապակե երկար վգով հիանալի տափաշեր։
օ-20 քառակուսում բացվեց երկու հոր, որոնցից մեկը տվեց ապակե անոթնե-
րի հիանալի նմուշներ։ Անոթներից մեկը բարակ պատճեռով թաս է, դարչնա-
գույն ներկով արված հարուստ զարդանախչերով։ Թասի ծալված պսակի աա-
կով շուրջանակի նշմարվում է արարատառ մի արձանագրություն։ Նկարա-
գարդ այս անոթը եզակը նմուշ է և պատմա-հնագիտական մեծ արժեք է ներ-
կայացնում։ Ապակիների մեջ բավական մեծ խումբ են կազմում կանելյուր-
ներով թասերը, զամպարները, որոնք հայտնի են նաև նախորդ աարիների պե-
ղումներից։ Գանվել են նաև ապակե տափակ թասերի մի քանի օրինակներ,
որոնք մեր կողմից գիտվում են որպես շահերի ստորին մեծ զամպարներ։ Նույն
տեղում հայանարերվել են միագույն և բազմագույն զնարակած և հասարակ
ինչեղենի բազմաթիվ բեկորներ։



Զափազանց կարեոր է կենտրոնական-կրոնական թաղամասում հեթանո-
սական մեհանի ոռհասեղանի կավե պատկերազարդ աախաակի գյուտը։ Այդ-
օրինակ աախաակներ նախորդ տարիների պեղումներից հայտնի էին միայն
Դվինի միջնարերդում⁸։

Ինչպես նշեցինք, 1965 թ. օ-18 և օ-19 քառակուսիներում երկան էու եկեւ

⁶ Ա. Ա. Քալանքարյան. Զենքերը V—VIII դր., ՊԲՀ, 1965, № 4, նույնի, Մатериаль-
ная культура Двина IV—VIII вв., автореферат кандидатской диссертации, Ереван, 1966

⁷ Գ. Մ. Տիրացյան, Հացավան ամրոցի պեղումները. 1963 թ., «Տեղեկագիր» հաս. պիա., 1964, № 10.


⁸ Կ. Գ. Ղաֆազարյան. Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնարերդի հեթանո-
սական մեհանի մասին, ՊԲՀ, 1966, № 2 (33), էջ 52—57։



Նկ. 5. 1. Հատակագիծ — 19 քառակուառմ բացված շինության հետքերի 2. Հատակադիմ շինության հարավային պատի և 19—20 քառակուառմ բացված սենյակի

վաղ երկաթի ժամանակաշրջանի նյութերը: Ե-20 քառակուառու հորերը պեղելիս պարզվեց, որ սառորին շերտը մոտ 1,5 մ հաստությամբ հագեցված է այդ նյութերով: Դուրս եկան սև փայլեցրած կավե անոթների բեկորներ, բնորոշ փորագիր զարդերով: Հորի միջից դուրս եկավ նաև պատկերազարդ տախտակի մը բեկոր, նախնական զննությունը ցույց տվեց, որ IX դ. հորը խորացնելու ժամանակ ծակել և իշել են ապրուշանի կենտրոնով: Տեղում մոտ 4.0 մ խո-

բություն վրա պահպանված էր կավե հիմքը, որի վրա հենվում էր տախտակը, բարերի կլոր շարվածքը, որի մեջ այրվում էր կրակը։ Կավե պաշտամունքային կուռքերի գյուտը մեծ նշանակություն է ստանում և վերստին հաստատում է Դվինի պաշտամունքային խոշոր կենտրոն լինելու։



Նկ. 6. 1. Թհակոր խաչերի քանդակազարդ բեկորներ։ 2. Հուշասլան խոյակի տեսքը և կտրվածքները։

1968 թ. պեղումները Աշխատանքները սկսվեցին Ե-21, ա-20 և -21,-2-19 քառակուսիներում։ Հիմնականում նպատակն էր պարզել շինության հարավային սենյակի սահմանագծերը և գտնել շինության արևոտյան պատր։ Ա և Ե-21 քառակուսիների հարավ-արևմտյան անկյունում բացվեց 1,5 մ բարձրությամբ կավե պատ, որի հիմքում ընկած էր փուլ եկած եկեղեցու բեկորներ։

Որոշ հետախուզական աշխատանքներ կատարվեցին յ-19 քառակուսում (նկ. 5₁): Այստեղ ուրվագծվեց ինչ-որ շինության պատի հետքեր, որոնք գընում էին դեպի հյուսիս, կաթողիկոսարանին զուգահեռ: Թացվեց շինության պատի հարավ-արևմտյան անկյունը ներսի մասում: Քարերը լավ մշակված են, իսկ պատի հաստությունը մոտ 1,0 մ է: Այդ հատվածում գտնվեցին երկու կավանոթներ, բուսական և երկրաշափական գարդերով, ապակե անոթների բեկորներ, ինչպարբեր քանդակաղարդ բեկորներ (նկ. 6₁), ինչպես նաև մեծ կարասի մնացորդներ:

1969 թ. պեղումները Պեղումները զարունակվեցին հարավային մասում, որտեղ սկսվեցին նշմարվել հաստ պատի հետքեր: Թացվեց նաև 1965 թ. օ-20 քառակուսու աղյուսաշեն բերանով հորի նման մի այլ օրինակ, որը նույնպես դատարկ էր: Հյուսիսային թեռում շինության հետքեր չեն երևում: Թացվեց ջրատարի մի հատված:

1970 թ. պեղումները Աշխատանքները նորից կենարոնացված էին հարավային և հյուսիսային հատվածներում (աղ. XII): Հարավային մասում օ-19 և -20 քառակուսիներում բացվեց մոտ 3,0 մ հաստությամբ պարսպապտու, որին արտաքին կողմրց հենված էին աղյուսաշեն պատեր (աղ. XIII):

Այս պարիսպը և շինությունները կառուցվել են եկեղեցու փլուզումից հետո, քանի որ նրա հիմքերը շարված էին եկեղեցու կրաշաղախ մեծ բեկորներով: Գտնված նյութերը սակավաթիվ են, հիմնականում պատեր և խեցեղեն:

Պեղավայրի հարավային հատվածի սենյակներից մեկում, սառըին շերաից գտնվեց մուգ կապտավուն բաղալտից պարաստված մի թասի կես (նկ. 25₁): Այն ունի կլոր հատակ և ուղղահայաց կարճ պատեր: Թասի վրայով անցնում են զարդագուահներ, որոնք կատարված են մեծ հմտությամբ: Վերին գոտին կազմված է կենարոնում կետով շրջագծերից: Սառըին գոտու զարդը կեռունաձե միմյանց կցված ծայրերով լայն աերևներ են: Գոտիները միմյանցից բաժանված են շուրջանակի նուրբ տկոսներով: Թասի կենարոնով ուղղահայաց հջնում ևն շոշագծերով առմած միջնորմներ, որոնք հորիզոնական զարդը բաժանում են երկու հատվածի: Անոթն իր մշակումով և զարդով կատարյալ է: Այն իր վրա է կրում քարե անոթների պատրաստման հելենիստական և անահիկ արվեստի աղդեցությունը, մի հանգամանք, որը նկաավում է վտղ միջնադարյան արհեստագործական մի շարք ճյուղերի վրա (ապակի, զենք, զարդ և այլն):

Վենտրոնական թաղամասում հայտնաբերված քարե ամանների մեջ իր ուրուցն տեղն է գրավում մոխրագույն մարմարից պատրաստված ասկիակ կլոր հասակով, ուղղահայաց պատերով անոթը (բեկոր), որն ունի անթերի մշակում: Այն իր ձևով նույնանման է նույն թաղամասում դանված կավե, ապակե անոթներին, որոնք թվագրվում են VIII—IX դդ. (նկ. 29₅):

Նոյն վայրից գանվել է նաև տոտիակ, լայն պոշով գդալիկ, որն իր վրա ունի շեղանկյուն զարգեր (նկ. 30₅): Պոչի վերին ծայրը և երեանի երկու կողմերը գարդարուն են: Բերանը փոքր է և քիչ երկար (երկարությունը՝ 7,0 սմ, պոշի լայնությունը՝ 1,0 սմ, բերանի երկարությունը՝ 1,0 սմ): Հյուսիսային մասում բացվեց արևելքից-արևմուաք ձգված մոտ 2,0 մ լայնությամբ մի պատ, որի շարվածքի մեջ հայտնաբերվեց անտիկ շրջանի քարե արձանների երեք գլուխ: որոնցից մեկը՝ կիսամշակ: